ՎԱՐԴԻԹԵՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀԱԱ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԻՄԵՐԵԹԻ ԹԵՄԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԺԹ. ԴԱՐԻ 30-90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԺԹ. դարում Հայ Եկեղեցու քաղաքական դերի բարձրացումն իր ազդեցությունը թողեց եկեղեցական-վարչական կյանքի կազմակերպման վրա: Ռուսական իշխանությունները, Անդրկովկասում իրականացրած վարչական փոփոխություններին զուգահեռ, քայլեր ձեռնարկեցին նաեւ Հայ Եկեղեցու հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ: Նրանք մի կողմից սահմանափակեցին Հայ Եկեղեցու իրավունքները՝ թողնելով միայն հոգեւոր-մշակութային ինքնավարությունը, մյուս կողմից՝ փորձեցին պահպանել Հայոց կաթողիկոսի համահայկական հեղինակությունն ու ազդեցությունը: Օրենսդրորեն սա արտահայտվեց 1836 թ. մարտի 11-ին Հայ Եկեղեցու կառավարումը կարգավորող կանոնադրության՝ «Պոլոժենիե»-ի ընդունմամբ: Կանոնադրության 10 գլուխները եւ 141 հոդվածները սահմանում էին նրա ընդհանուր իրավունքներն ու պարտականությունները: Հայոց Եկեղեցու գլուխը նախկինի նման մնում էր կաթողիկոսը, որին հաստատելու վերջնական իրավունքը վերապահվում էր ռուսաց կայսրին: Կաթողիկոսի իշխանությունը սահմանափակվեց: Ստեղծվեց Հայոց Եկեղեցու կառավարման բարձրագույն ատյան՝ Սինոդ[1]: Թեմական առաջնորդներին եւս հաստատում էր ռուսաց կայսրը: Ռուսական կայսրության սահմաններում ստեղծվեցին հայոց հոգեւոր վեց թեմեր, որտեղ ձեւավորվեցին թեմական կառավարման կենտրոնական վարչական մարմիններ՝ կոնսիստորիաներ (Հոգեւոր ատյան):

[1] Կաթողիկոսի ներկայացրած թեկնածուներից կայսրն ընտրում էր Սինոդի ութ անդամներին: Սինոդն ուներ նաեւ Սենատի կողմից նշանակվող ավագ դատախազ (օբեր պրոկուրոր), որը կայսեր անմիջական ներկայացուցիչն էր եւ իրավունք ուներ վերահսկելու, անհրաժեշտության դեպքում միջամտելու եկեղեցական գործերին: Սինոդն իր գործունեությունն իրականացնում էր կառավարչական, տնտեսական, դատական, հաշվարարական բաժինների միջոցով: Այն գործում էր կոլեգիալ սկզբունքով՝ կաթողիկոսի նախագահությամբ:

Սինոդի եւ կոնսիստորիաների հիմնական գործառույթը համապատասխանաբար Ամենայն Հայոց Հայրապետի եւ թեմական առաջնորդների իշխանության սահմանափակումն էր: «Պոլոժենիե»-ով հայոց եկեղեցական կառավարման ավանդական ձեւը փոխվեց: Ներդրվեց Սինոդային համակարգ՝ բյուրոկրատական կառավարման սկզբունքներով:

Ընդհանուր առմամբ ԺԹ. դարում Հայ Եկեղեցու կառավարման համակարգի ձեւավորումը կախվածության մեջ հայտնվեց ինչպես ռուսական իշխանությունների արտաքին քաղաքական առաջնահերթություններից, այնպես եւ Հայոց հոգեւոր բարձրագույն իշխանության գործունեությունից:

Վրաստանի եւ Իմերեթի թեմը[2] *Հայոց Եկեղեցու խոշոր թեմերից էր. նրան պատկանում էին Թիֆլիսի եւ Քութայիսի նահանգներում, Սուխումի եւ Զաքաթալայի շրջաններում, Գանձակի նահանգի Ղազախ ու Գանձակ գավառներում գտնվող հայ համայնքները (1878 թ. ավելացավ նաեւ Բաթումի մարզը): Հովհաննես Գեղարդակրի (1802-1810 թթ.) առաջնորդության ժամանակ Թիֆլիսում ստեղծված Հոգեւոր կառավարության*[3] *հիման վրա 1837 թ. բացվեց թեմի կոնսիստորիան*[4]*:*

«Պոլոժենիե»-ով (հոդ. 55-71) թեմական առաջնորդին տրվեց թեմում վարչական, դատական եւ ֆինանսատնտեսական վերահսկողության իրականացման, ինչպես նաեւ եկեղեցական ծխական դպրոցների, հոգեւոր ուսումնական հաստատությունների կառավարման իրավունք: Թեմի կառավարման հարցերում թեմական առաջնորդին գործակից էր կոնսիստորիան, որի ատենակալը թեմական առաջնորդն էր: Այդ գործակցությունն արտահայտվում էր հետեւյալ կերպ. Հոգեւոր ատյան ուղարկված տարաբնույթ հարցերի վերաբերյալ դիմումները քննարկվում եւ համապատասխան վճիռներն ընդունվում էին կոնսիստորիայի չորս անդամների կողմից պարբերաբար գումարվող նիստերում: Կոնսիստորիայում գործերի քննման եւ վարման ընթացակարգը նույնն էր, ինչ որ Սինոդում: Այսինքն՝ նիստերը տեղի էին ունենում կոլեգիալ սկզբունքով: Նիստերին թեմական առաջնորդը չէր մասնակցում, սակայն որոշումների վերջնական հաստատումը նրան էր վերապահված: Իրեն ներ-

---

[2] Մասնագիտական գրականության համաձայն՝ Վիրահայոց թեմը ստեղծվել է ԺԲ. դարի 70-ական թվականներին, իսկ մինչ այդ վիրահայ համայնքը ղեկավարել են հայ եպիսկոպոսներն ու քահանաները:

[3] **Ա. Երիցեան**, Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը եւ Կովկասի հայք 19-րդ դարում, հ. Բ., Թիֆլիս, 1895, էջ 458:

[4] Կոնսիստորիայի հիմնադրման մասին տես ՀԱԱ, ֆ. 53, g. 1, գ. 39:

կայացված վճիռների հետ համաձայն չլինելու դեպքում նա իրավունք ուներ որոշումը հետ ուղարկել լրացուցիչ քննարկման: Հոգեւոր ատյանի անդամները նշանակվում էին թեմական առաջնորդի առաջադրմամբ եւ Սինոդի հավանությամբ: Կոնսիստորիան ուներ նաեւ դիվանատուն, որը գլխավորում էր ատենադպիրը (քարտուղար): Դիվանատան աշխատակիցներին (քարտուղարից բացի, ուներ նաեւ թարգմանիչ, արխիվարիուս, էկզեկուտոր-գանձապահ, գրագիրներ) ընտրում էին կոնսիստորիայի անդամները, հաստատում՝ թեմական առաջնորդը: Իրականացվող գործավարության, փաստաթղթաշրջանառության պատասխանատուն դիվանատան քարտուղարն էր:

Ըստ էության, թեմական առաջնորդը եւ կոնսիստորիան միասին կազմեցին թեմական կառավարման բարձրագույն կամ կենտրոնական իշխանությունը:

Վրաստանի եւ Իմերեթի թեմում կենտրոնական իշխանության ձեւավորման գործընթացը կախվածության մեջ հայտնվեց ինչպես կաթողիկոսի եւ Սինոդի հետ ունեցած հարաբերությունների բնույթից, այնպես եւ ներթեմական զարգացումներից: Այն նախեւառաջ աչքի ընկավ կաթողիկոս-թեմական առաջնորդ ու թեմական առաջնորդ-Սինոդ հարաբերություններում հակասությունների առաջացմամբ:

1837-1892 թթ. թեմակալած վեց առաջնորդներից չորսը՝ Կարապետ արք. Բագրատունի (1837-1856 թթ.), Սարգիս արք. Ջալալյանց (1857-1861 թթ.), Գաբրիել արք. Այվազովսկի (1876-1880 թթ.) եւ Արիստակես եպս. Սեդրակյանց (1883-1889 թթ.) խնդիրներ ունեցան Սինոդի կամ կաթողիկոսի հետ: Հակասությունների հիմքում ընկած էր մի կողմից թեմակալների ինքնուրույն կամ անկախ գործելաոճը, մյուս կողմից՝ Սինոդի եւ կաթողիկոսի կողմից այն զսպելու ձգտումը:

Այսպես՝ 1837 թ. Վրաստանի եւ Իմերեթի թեմի առաջնորդությունն ստանձնած Կարապետ արք. Բագրատունին ի սկզբանե փորձեց թեմի կառավարման գործում ինքնուրույնություն դրսեւորել՝ քայլեր ձեռնարկելով թե՛ վարչական, թե՛ կրթամշակութային հարցերի լուծման ուղղությամբ: Սակայն նա խոչընդոտների հանդիպեց ինչպես տեղում, այնպես եւ Սինոդի ու կաթողիկոսի կողմից: 1839 թ. Հովհաննես Ը. Կարբեցի կաթողիկոսի (1831-1842 թթ.) եւ Կարապետ արքեպիսկոպոսի միջեւ նամակագրությունից[5] տեղեկանում ենք Թիֆլիսում վերջինիս դեմ կազմակերպված ելույթների մասին: Իսկ արդեն 1843 թ. Էջմիածնի Սինոդի

[5] Տես ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 607, թ. 1-2:

ավագ դատախազի պաշտոնակատար Ս. Մատինովը չարաշահումների մի ամբողջ շարք[6] ներկայացրեց Կարապետ արքեպիսկոպոսի դեմ: Վրաստանի եւ Իմերեթի թեմի գործերն ստուգելու նպատակով՝ Ներսես Ե. Աշտարակեցի կաթողիկոսի (1843-1857 թթ.) պահանջով Սինոդը հատուկ հանձնաժողով ստեղծեց: 1849 թ. կաթողիկոսը որոշեց Կարապետ արքեպիսկոպոսին Սինոդի անդամ նշանակել՝ գործնականում հեռացնելով թեմական առաջնորդի պաշտոնից[7]: Կարապետ արք. Բագրատունին, չընդունելով կաթողիկոսի այս որոշումը, հրաժարվեց Սինոդի անդամությունից եւ վերադարձավ Ախալցխա: Երկարատեւ քննություններն ի վերջո ապացուցեցին նրա անմեղությունը. Ներսես Ե. Աշտարակեցին 1850 թ. վերանայեց իր վերաբերմունքը Կարապետ արք. Բագրատունու նկատմամբ եւ փորձեց վերականգնել երբեմնի հարաբերությունները[8]: Ընդ որում՝ 1840-ական թվականներից ծավալված վերոնշյալ իրադարձությունները թույլ չտվեցին Կարապետ արք. Բագրատունուն թեմի բարեկարգման ուղղությամբ ձեռնարկած քայլերն ավարտին հասցնել:

1857 թ.՝ Ներսես Ե. Աշտարակեցի հայրապետի մահվանից հետո, ռուսական իշխանությունները «Պոլոժենիե»-ի ամրապնդմանն ուղղված միջոցներ ձեռնարկեցին: Այդ նպատակով որոշվեց նախեւառաջ լրացնել Սինոդի անդամների՝ դեռեւս Ներսես Ե. կաթողիկոսի ժամանակվանից թափուր մնացած տեղերը[9]: Այսուհետ թեմական առաջնորդները, իրենց պաշտոնավարությանը զուգահեռ, կարող էին նաեւ Սինոդի անդամ նշանակվել: Ռուսական իշխանությունները, քաղաքական նկատառումներից ելնելով, խնդիր ունեին միեւնույն ժամանակ պահպանել թե՛ կաթողիկոսի ունեցած հեղինակությունը համայն հայության շրջանում, թե՛ թույլ չտալ նրա «միանձնյա իշխանության» հաստատումը: Ռուսական իշխանությունները թեմական առաջնորդներին համարում էին կաթողիկոսի «միանձնյա իշխանությանը» հակակշիռ ուժ:

Մի կողմից իշխանությունների բռնած այս դիրքորոշումը, մյուս կողմից՝ կաթողիկոսի պատասխան հակադարձումը նպաստեցին հակասությունների եւ անհամաձայնությունների առաջացմանը թեմական առաջ-

---

6 Տես ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 1470, թ. 1-8:

7 Տես **Ա. Տունյան**, Католикос всех армян Нерсес V Аштаракеци - “Защитник отечества”, Св. Эчмиадзин, 2012, էջ 299:

8 Տես **Ա. Մելքոնյան**, Հայաստանի պատմության եւ ժողովրդագրության հիմնահարցեր (հոդվածների ժողովածու), Ներսես Աշտարակեցի կաթողիկոս եւ Կարապետ արք. Բագրատունի (կենսագրական զուգահեռներ), Երեւան, 2011, էջ 365-366:

9 Տես АКАК, т. XI, Тифлись, 1888, թ. 17, 18, 20:

նորդների հետ հարաբերություններում: Այս անգամ լարվածություն առաջացավ Մատթեոս Ա. Կոստանդնուպոլսեցի հայրապետի (1858-1865 թթ.) ու Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմական առաջնորդ Գաբրիել Այվազովսկու (1857-1865 թթ., հետագայում՝1876-1880 թթ., Վրաստանի եւ Իմերեթի թեմի առաջնորդ) ու Վրաստանի եւ Իմերեթի ժամանակավոր[10] թեմական առաջնորդ Սարգիս արք. Ջալալյանցի (1857-1861 թթ.) միջեւ: Վերջինս նաեւ Սինոդի անդամ նշանակվեց: Ներսիսյան դպրոցի կառավարման հարցերում Սարգիս արք. Ջալալյանցի ինքնուրույնությունը հարուցեց կաթողիկոսի դժգոհությունը[11]: Արդյունքում՝ 1861 թ. կաթողիկոսը նրան հեռացրեց ինչպես թեմական առաջնորդի պաշտոնից, այնպես եւ Սինոդի անդամությունից[12]: Իշխանությունների կողմից կաթողիկոսի այս քայլը դիտարկվեց որպես ոչ օրինական, եւ 1864 թ. Մատթեոս Ա. Զուխաջյանը հարկադրված Սարգիս արք. Ջալալյանցին նշանակեց Արցախի թեմական առաջնորդ[13], իսկ Վրաստանի ու Իմերեթի թեմի առաջնորդ նշանակվեց Մակար Թեղուտեցին[14] (1885-1891 թթ. Հայոց կաթողիկոս): Գաբրիել Այվազովսկու հետ լարվածությունը հանգեցրեց նրան, որ կաթողիկոսը իշխանությունների առջեւ հարց բարձրացրեց առաջինիս մնալու դեպքում կաթողիկոսությունից հրաժարվելու վերաբերյալ: Ռուսական իշխանությունները, կարեւորելով համայն հայության շրջանում կաթողիկոսի հեղինակության պահպանումը, որոշեցին վերջինիս հետ համաձայնության գալ:

Այսպիսով, «Պոլոժենիե»-ի ամրապնդման գործընթացում Մատթեոս Ա. Կոստանդնուպոլսեցին եւս փորձեց իր հոգեւոր իշխանությունը հաստատել: Իշխանությունները քայլեր ձեռնարկեցին՝ որպես հակակշիռ ուժ օգտագործելով Սինոդը եւ թեմական առաջնորդներին: Այս ամենը, անշուշտ, իր կնիքը թողեց ինչպես եկեղեցական վարչական ընդհանուր համակարգի, այնպես եւ թեմական կենտրոնական իշխանության ձեւավորման վրա: Հատկապես բարդ էր իրավիճակը խոշոր թեմերում, ինչպիսին էր Վրաստանի եւ Իմերեթի թեմը: Պատահական չէ, որ ռուսական իշխանություններն իրենց ուշադրության կենտրոնում պահում եւ որպես հավասարակշիռ ուժ էին դիտարկում կաթողիկոսից հետո առավել աչքի

---

[10] ՄՄ, Ա. Երիցյանի արխիվ, թղթ. 154, վավ. 367, էջ 1-4. թղթ. 150, վավ. 154, էջ 1-2:

[11] Տես ՀԱԱ, ֆ. 1262, ց. 1, գ. 4 (II), թ. 15-25-ի շրջ.:

[12] Տես **Ռ. Տունյան,** "Положение" Армянской церкви 1836-1875, Ереван, 2001, էջ 98:

[13] ՄՄ, անդ, թղթ. 149, վավ. 69, էջ 1-2. վավ. 70, էջ 1-2:

[14] Տես **Ռ. Տունյան**, նշվ. աշխ., էջ 106:

ընկնող եկեղեցական գործիչներին, որոնք, որպես կանոն, նշանակվում էին խոշոր թեմերի առաջնորդներ:

Սինոդին ցանկալի անձանց կոնսիստորիայի անդամ նշանակելու, թեմի կառավարման գործում թեմական առաջնորդների նախաձեռնություններին ընթացք չտալու միջոցով նրանց ինքնուրույնության սահմանափակումը դրսեւորվեց նաեւ հետագայում: Այսպես՝ Գաբրիել արք. Այվազովսկու թեմականության կարճատեւ շրջանում Սինոդը կոնսիստորիայի անդամներ հաստատել տվեց իրեն ցանկալի անձանց՝ սահմանափակելով առաջնորդի իշխանությունը: Միակ բացառությունը Ստեփանոս քհն. Սամուելյանցն էր, որը թեմական առաջնորդի խնդրանքով Նոր Նախիջեւանի ու Բեսարաբիայի թեմից տեղափոխվեց Թիֆլիս եւ իրեն օգնական նշանակվեց[15], իսկ կոնսիստորիան գլխավորեցին Սինոդի համակիրներ Գրիգոր Աղաջանյանցը եւ Մամբրե վրդ. Սանասարյանցը (1889-1892 թթ. Վրաստանի եւ Իմերեթի թեմի առաջնորդ):

Գաբրիել արք. Այվազովսկուն հաջորդած Արիստակես եպս. Սեդրակյանցը (1883-1889 թթ.) նախորդից առավել ընդգծված ինքնուրույն գործելաոճ ցուցաբերեց, ինչը դարձյալ հարուցեց թե՛ Սինոդի, թե՛ կաթողիկոսի դժգոհությունը: Արիստակես եպս. Սեդրակյանցի ինքնուրույնությունը դրսեւորվեց թեմական կառավարման գործում ցուցաբերած կառուցողական մոտեցման մեջ, մասնավորապես՝ նա փորձեց հստակեցնել եւ առանձնացնել շուտափույթ լուծման կարիք ունեցող խնդիրներն ու ձեռնարկել համապատասխան քայլեր: Այսպես՝ երեսփոխանների գործունեության կարգավորման նպատակով 1883 թ. թեմական առաջնորդը ստեղծեց երեսփոխանների ու եկեղեցական բարեկարգիչների հաշվետես հանձնաժողով, իսկ քահանաների նյութական ապահովության կարգավորման համար՝ քահանայության ապահովության գանձարան[16]:

Ի պատասխան Արիստակես եպս. Սեդրակյանցի ցուցաբերած նախաձեռնողականության՝ Մակար Ա. Թեղուտցի կաթողիկոսը (1885-1891 թթ.) 1886 թ. հմր. 251 կոնդակով մի կողմից քննադատեց նրան, մյուս կողմից՝ նախատեց, թե իբր չի կարողացել կարգավորել թեմի գործերը: Այնուհետեւ նույն կոնդակով կաթողիկոսը կոչ է անում Արիստակես եպս. Սեդրակյանցին ենթարկվել իր եւ Սինոդի իշխանությանը, հոգեւոր դասի բարոյական անկումը վերացնելով՝ փորձել կարգավորել թեմի գործերը[17]:

---

[15] ՀԱԱ, ֆ. 56, g. 1, գ. 6673, թ. 14-18:

[16] ՀԱԱ, ֆ. 57, g. 1, գ. 221, թ. 20-22:

[17] Անդ, թ. 26-27:

1888 թ. Ամենայն Հայոց Հայրապետը առանց իր եւ Սինոդի գիտութ-յան քահանաներ ձեռնադրելու համար դարձյալ հանդիմանեց թեմակալ առաջնորդին[18]: Հավելենք, որ Մակար Ա. Թեղուտեցին 1864-1876 թթ. զբաղեցրել էր Վրաստանի եւ Իմերեթի թեմի առաջնորդի պաշտոնը: Նրա առաջնորդության ընթացքում թեմական կառավարման համակարգում արտակարգ փոփոխություններ տեղի չեն ունեցել: Այսպիսի գործելաոճ ցուցաբերեց նաեւ 1889-1892 թթ. թեմակալած Մամբրե Սանասարյանցը:

Ըստ էության, ներդրված Սինոդային կառավարման համակարգը գործնականում վերածվեց կաթողիկոսի, Սինոդի եւ թեմակալ առաջնորդ-ների միջեւ ինքնուրույնության համար պայքարի եւ ներքին հակասութ-յունների մրցադաշտի: Հայոց կաթողիկոսները մտավախություն ունեին, որ թեմակալ առաջնորդների չափից ավելի ինքնուրույնությունը կարող է սպառնալ իրենց հոգեւոր իշխանությանը, որն արդեն իսկ սահմանա-փակված էր Սինոդի կողմից: 1837-1892 թթ. Վրաստանի եւ Իմերեթի թեմակալ վեց առաջնորդներից չորսի՝ թեմի բարեկարգման գործում ցու-ցաբերած ինքնուրույնությունը կաթողիկոսի եւ Սինոդի կողմից սահմա-նափակվեց, քանի որ այն դիտարկվում էր որպես վերջիններիս անհնա-զանդության դրսեւորում:

Թեմական կենտրոնական իշխանության ձեւավորման եւ կայացման գործընթացում կոնսիստորիայի դերը կարելի է դիտարկել՝ կոնսիստո-րիայի անդամների (հոգեւորականներ) եւ դիվանատան քարտուղարի (մեծավ մասամբ աշխարհիկ) ունեցած ազդեցության տեսանկյունից: Ընդհանրապես Սինոդի գործունեության շրջանի եկեղեցական պատ-մության վիճահարույց խնդիրներից մեկը եկեղեցական կառավարման գործընթացում պետական բյուրոկրատական համակարգի ունեցած ազ-դեցության հարցն է: Այս առումով խոսքը մասնավորապես վերաբերում է դիվանատան քարտուղարին: Քարտուղարի պաշտոնը կարեւոր էր, քանի որ հաստատված բյուրոկրատական կառավարման պայմաններում խիստ անհրաժեշտ էին գրասենյակային գործավարումը, ռուսաց լեզվի եւ օրենքների իմացությամբ աշխատակիցների առկայությունը: Այդպի-սով, քարտուղարը կոնսիստորիայում ձեռք էր բերում ազդեցիկ դիրք: Քարտուղարի՝ կոնսիստորիայում ունեցած կարեւորությունը հակա-սում էր թեմակալ առաջնորդի հոգեւոր իշխանության ընկալումներին եւ, բնականաբար, կարող էր վիճաբանությունների տեղիք տալ: Օրինակ՝ Ռուս Ուղղափառ Եկեղեցու թեմական կառավարման համակարգում դի-

[18] ՀԱԱ, ֆ. 56, անդ, գ. 8299, թ. 1-ը շրջ.-ով:

վանատան քարտուղարի եւ թեմական առաջնորդի միջեւ ընդհարումները հազվադեպ երեւույթներ չէին[19]: Այստեղ քարտուղարը նշանակվում եւ ազատվում էր Սինոդի ավագ դատախազի կողմից եւ վերջինիս անձնական ներկայացուցիչն էր թեմում: Ճիշտ է, Հայոց Եկեղեցու թեմական կառավարման համակարգը վերակառուցվեց նույն սկզբունքներով, ինչ որ ռուսականը, ու համակարգի բնույթից բխող խնդիրներն այստեղ եւս գլուխ էին բարձրացնում, սակայն հակասություններն առավելապես դրսեւորվեցին կաթողիկոս, Սինոդ եւ թեմական առաջնորդ հարաբերություններում: Հարկ է նշել, որ 1840-ական թվականների վերջերից սկսած՝ քարտուղարի[20] պաշտոնը գործնականում հաճախ թափուր էր մնում: Գլխավոր պատճառը, թերեւս, սահմանված ցածր աշխատավարձն էր: Այն մոտ 360 ռ.[21] էր: 1870-ական թվականներին այն հասցվեց 800 ռ.[22]: 1837-1876 թթ. դիվանատան քարտուղարի պաշտոնում աշխատեց մոտ ութ անձ[23]: Ի տարբերություն նախորդ տասնամյակների՝ 1876-1895 թթ. դիվանատունն ունեցավ ընդամենը մեկ քարտուղար[24]:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե ինչպիսին էր հարաբերությունները թեմական առաջնորդի ու կոնսիստորիայի անդամների եւ դիվանատան քարտուղարի միջեւ, ապա պետք է նշել, որ կոնսիստորիան Սինոդի եւ կաթողիկոսի կողմից դիտարկվում էր որպես թեմական առաջնորդի իշխանության սահմանափակման կամ զսպման միջոց, ինչը եւ հաճախ իր գործնական կիրառությունն էր գտնում:

Պետք է նշել, որ կոնսիստորիայի ձեւավորման սկզբից թեմի առաջնորդներն առանձնակի ուշադրություն դարձրին դիվանատան գործու-

---

[19] Տես **Ф. Владимировна,** Статус секретаря духовной консистории в системе епархиального управления РПЦ Синодального периода (Исторические, философские, политические и юридические науки, культурология и искусствоведение. Вопросы теории и практики), 2015, N 6(56), ч. II, էջ 191-195. **В. Вяткин,** Епархиальные архиереи и секретари духовных консисторий в первой половине XIX века: анализ конфликтности в отношениях (Вестник Российского государственного университета им. И. Канта), 2010, вып. 12, էջ 7-10:

[20] 1837-1841 թթ. Վրաստանի եւ Իմերեթի թեմի կոնսիստորիայի դիվանատունը ղեկավարեց Հովհաննես Խուբովը (ծառայողական ցուցակը տես ՀԱԱ, ֆ. 56, անդ, գ. 564, թ. 11-13):

[21] Անդ, գ. 4058, թ. 5-ի շրջ.:

[22] Անդ, գ. 8621, թ. 23 եւ շրջ.:

[23] Տես ՀԱԱ, ֆ. 53, անդ, թ. 26, 30. ֆ. 56, անդ, գ. 3133, թ. 1-2. գ. 5542, թ. 2-3. գ. 6677, թ. 8-9:

[24] Այդ պաշտոնը զբաղեցրեց Գրիգոր Բեկջանյանցը, որը Թիֆլիս էր տեղափոխվել Աստրախանի թեմից. ցուցակը տես ՀԱԱ, ֆ. 56, անդ, գ. 8621, թ. 24-29:

նեությեան կարգավորմանը: Այսպես՝ Կարապետ արք. Բագրատունին, ի սկզբանե նկատելով գրագրության աճը, որոշեց ավելացնել կոնսիստորիայի դիվանատան հաստիքները եւ բարձրացնել սահմանված աշխատավարձը[25]: Նախկին Հոգեւոր կառավարությունն ունեցել էր ընդամենը մեկ նոտար եւ գրագիր: 1837-1841 թթ. Կարապետ արք. Բագրատունին դիվանատան բարեկարգման հարցով չորս դիմում ներկայացրեց Սինոդին, սակայն դրական պատասխան չստանալով՝ որոշեց աշխատավարձը (1350 ռ.) ավելացնել 750 ռ.-ով[26]: Նրա այս քայլը դժգոհությամբ ընդունվեց թե՛ Սինոդի, թե՛ ավագ դատախազի կողմից, որոնք հանդիմանական նամակ ուղարկեցին Կարապետ արքեպիսկոպոսին: Միեւնույն ժամանակ նրանք հարկադրված աշխատավարձը ավելացրին 300 ռ.-ով: Կոնսիստորիայի ատենադպիրը եւ մյուս ծառայողները, դժգոհ մնալով Սինոդի կողմից ընդունված այս որոշումից, հրաժարվեցին իրենց պաշտոններից: Հաստատվեց նոր կազմ[27]: Հետագայում արդեն՝ 1858 թ., թեմական առաջնորդ Սարգիս Ջալալյանցը հատուկ հրաման արձակեց, որով հանձնարարում էր քննել կոնսիստորիայի դիվանատան գրությունը եւ արդյունքները զեկուցագրի տեսքով մանրամասն ներկայացնել իրեն: Կազմվեց, այսպես կոչված, «Գաղափար կամ Պրոյեկտ»[28], որտեղ ներկայացվում էին դիվանատան վիճակը եւ թե ինչ միջոցներ էին անհրաժեշտ այն կարգավորելու համար: Բանն այն է, որ Կարապետ արք. Բագրատունու դեմ ծավալված իրադարձությունների ընթացքում Ներսես Ե. Աշտարակեցու հրամանով դիվանատան կազմը եւս կրճատվել էր: Թողնվել էին միայն քարտուղարը եւ հինգ գրագիր: 1859 եւ 1861 թվականներին Սարգիս Ջալալյանցը դիվանատան բարեկարգման վերաբերյալ նախագիծը երկու անգամ Սինոդ ուղարկեց, սակայն դրական արձագանք չստացավ[29]: Նույն խնդրին բախվեց նաեւ Մակար Ա. Թեղուտցին, որը նախկինում արդեն իսկ կազմված նախագիծը, որոշ թարմացումներով, 1866 թ. դարձյալ ներկայացրեց Սինոդին[30]: Այս անգամ եւս Սինոդի արձագանքը բացասական էր: Ըստ Ա.

---

[25] 1837-1847 թթ. սահմանված տարեկան աշխատավարձը հետեւյալն էր՝ թեմական առաջնորդ - 3500 ռ., ատենադպիր - 360 ռ., թարգմանիչ - 180 ռ., գրագիրներ - 600 ռ.: Կոնսիստորիայի անդամները ծառայում էին անվճար (Տես ՀԱԱ, ֆ. 53, անդ, գ. 83, թ. 26):

[26] Տես **Հ. Գեղամյանց,** Կարապետ արքեպիսկոպոս (կենսագրություն), Երեւան, 1999, էջ 62-63. ՀԱԱ, ֆ. 56, անդ, գ. 1012, թ. 1-4 շրջ. :

[27] Տես նշվ. աշխ., էջ 65:

[28] Տես անդ, գ. 4058, թ. 5-10:

[29] Տես անդ, թ. 2, 14:

[30] Տես անդ, թ. 17:

Երիցյանի՝ Սինոդը ձգտում էր ոչ միայն իր ձեռքում կենտրոնացնել իշխանությունը, այլ նաեւ թեմերի եկամուտները, ուստի խոչընդոտում էր թեմական առաջնորդների՝ թեմերի բարեկարգմանն ուղղված նախաձեռնություններին[31]*:*

Թեմական առաջնորդների մտահոգությունն անհիմն չէր. եթե 1837 թ. դիվանատան մտից գրությունների թիվը 121 էր, ապա 1846 թ. հասավ 2318-ի, 1866 թ.՝ 2500-ի[32]*, 1895 թ.՝ 6000*[33]*: Զարմանալի չէ, որ գործավարության անկանոնությունը եւ գործերի կուտակումը սովորական երեւույթ էին դարձել: Ընդ որում, եկեղեցական եւ վանքապատկան կալվածքների վերաբերյալ մատյանները եւս անմխիթար վիճակում էին: Պատահական չէ, որ վերոնշյալ «Պրոյեկտում» թեմի եկեղեցական ու վանական կալվածքները տրվում են առանց որեւէ թվաքանակ նշելու:*

Ընդհանուր առմամբ ԺԹ. դարի 30-90-ական թվականների ընթացքում Հայոց Եկեղեցու ինչպես Վրաստանի ու Իմերեթի, այնպես եւ այլ թեմերի կենտրոնական իշխանության ձեւավորումն ավարտուն տեսք չստացավ: Հաստատված Սինոդային կառավարման համակարգը տեսականորեն հայոց եկեղեցական կառավարման բոլոր օղակներում պետք է ապահովեր համապատասխան վերահսկողության լծակների առկայություն, սակայն գործնականում այն վերածվեց իշխանության համար պայքարի մրցադաշտի:

РЕЗЮМЕ

В XIX веке российские власти, наряду с административными изменениями в Закавказье, приняли меры для урегулирования взаимоотношений с Армянской Апостольской Церковью. Юридически это было выражено «Положением» 1836 г. Утвержденный устав изменил традиционную систему управления ААЦ. Была введена Синодальная система. В пределах Российской империи были созданы шесть армянских духовных епархий во главе с епархиальными начальниками. При них открылись административные органы управления - консистории. Епархиальный начальник и консистория вместе представляли центральную духовную власть епархии. В течение 30-90-ых годов XIX столетия процесс

---

[31] Տես **Ա. Երիցեան**, նշվ. աշխ., էջ 459:

[32] Անդ, թ. 5-ի շրջ. 19:

[33] ՀԱԱ, ֆ. 53, անդ, գ. 544, թ. 2 եւ շրջ.:

формирования и становления высшего управления как Грузино-Имеретинской, так и других епархий ААЦ не был завершен. Установленная Синодальная система управления теоретически должна была обеспечить соответствующие рычаги контролирования во всех сферах церковного управления. В действительности же она превратилась в поле борьбы за власть.

SUMMARY

In the 19th century, the Russian authorities, along with administrative changes in Transcaucasia, took measures to regulate the relations with the Armenian Apostolic Church. Legally, this was formulated by "Regulations" of 1836. The approved regulations changed the traditional management system of the Armenian Apostolic Church. The Synodal management system was introduced. Within the Russian Empire, six Armenian Dioceses were created, which were headed by diocesan bishops. Consistories were opened under their authority. The diocesan bishop and newly formed consistories represented the central or supreme power of the Diocese. In the 30-90s of the 19th century, the formation processes of the supreme government both in Georgia-Imereti and in other Dioceses of the Armenian Apostolic Church were not completed. The established Synodal management system was supposed to provide necessary levers of control in all spheres of the church government. In reality, the established system became a field of competition for power.